



□□ □□□□□□□ □□ □□□□□□□□□□□

Կանաչ կառեթներ գրքույկը Նաիրա Համբարձումյանի պոետական երախայրիքն է. հոգու անկեղծ մրմունջներ, հույզեր, ներաշխարհի կանչեր ու խոկումներ: Եվ բոլորն էլ անկեղծ ապրումների ծնունդ՝ հյուսված ճշմարիտ զգացմունքներից ու կյանքի կարոտից:

Նաիրան համոզված է, որ արվեստի ամենագեղեցիկ ստեղծագործություններն իրենց խորքում անպայման պահում են ամեղծվածային գաղտնիք, ծածկված են խորհրդավորության ինչ-որ շղթայով, իսկ մարդը դրան հասնում է բնության հանճարի, նրա անսահման հնարավորությունները բացելու միջոցով. Բնության գեղեցկության այլ բանաձև գոյություն չունի, քան ճշմարտությունը: Ճշմարիտն արդեն ինքն իր ձևի մեջ գեղեցիկ է... -, գրում է Նաիրան: ...

Իրականում Նրա բանաստեղծություններից շատերը ձգող ինչ-որ բան ունեն իրենց խորքում, այնպիսի գույներ ու պատկերներ, որոնք, հիրավի, անհատական են ու ցոլացնում են իր էությունը, զգայությունների այն ամբողջությունը, որով պոետիան դարձնում է շնչելու, գոյատևելու միջոց:

...Բավականին անսովոր ձևով, արվեստի հանդեպ երկյուղած ու խստապահանջ հայացքներով է ներկայանում Նաիրա Համբարձումյանը ընթերցողին: Ու անսովորը հենց առաջին ժողովածուին՝ բանաստեղծական այդ գեղեցիկ փնջին զուգահեռ ուղեկցող և փիլիսոփայական, և գեղագիտական ընդհանրացումներն են: Գիտի բառի տեղը, դերը, պատկերը նյութականացնելու եղանակը, մտքի ու հույզի ներդաշնակման կերպը.

Իմ ափերի մեջ
Ճշմարտությունն է մոմի պես վառվում
Ու դառնում է երգ.
Այս ծառի ճերմակ ամեղծվածի մեջ
Բառեր են հյուսվում.
Ես հեշտ կարդում եմ արդարությունը.
Որ ծառին փարված փաթիլի նման
Մի թեթև շնչից հալվում է, կորչում...
Պոետական ընկալումները սուբյեկտիվ են լինում: Ես տեսնում եմ բանաստեղծին, զգում շունչը կենդանի բնության:

Սևակ Արզումանյան

ԿԱՆԱԶ ԿԱՌԵԹՆԵՐ ԺՈՂՈՎԱԾՈՒԻՑ

Իմ ափերի մեջ ճշմարտությունն է
մոմի պես վառվում
ու դառնում է երգ...
2002թ.

Ես գնում եմ նկարելու այս գիշերը
Փթթող նռնենու ճյուղերին հյուսված
Ճերմակ հեքիաթում:
2002թ.

Իսկ նավակները,
հի՛ն նավակները՝
Իրենց վախեցնող կանխատեսությամբ
Հաստատում են ինձ
ասես աշխարհի
անխախտ լինելը...
2002թ.

Ու խշշոցի մեջ ինչ-որ անսահման
Հարազատ մի բան շամանդաղի պես
Աղոթում է լուռ
Անմոռուկների երկնագույն-ճերմակ
Քարանձավներում...
2002թ.

Սեր էր,
Երգ էր
Ու հաց...
Դու մնացիր
հեռու-հեռվում,
փոքրիկ կղզյակ...
Քո մեղավոր ձեռքերի մեջ՝
Անմեղ ծաղիկ..
Չանգերի ծայն...
Լռության ճիչ...
...Պարապությունը լցվում էր

սիրով,
Իսկ արբեցումի այդ դաշնության մեջ
Դեռ չապրած մի քիչ`
Կարոտ էր ծնվում...
Մութը գործել էր
շքե՛ղ,
մի շքե՛ղ վարագույր...
Կաթնամշուշից խնորվում էր սեր.
Այդ սերն ապրում էր
Ծանկալի նման
Իմ վարսերի մեջ,
Հետո` կաթկթում...
2004թ.

Մրսում են ծառերը,
օգնեցե՛ք նրանց,
Ծածկեցե՛ք նրանց...
Արեգակնավառ
ցոլափոխանքով...
2001թ